ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

«21» 11 2017 թ.г.
ՊՄՊՀ /4199

«Դարշին» ՍՊԸ-ի տնօրեն
Է. Զաքարյանին
Հասցե՝ ք. Երևան, Կարապետյան 9
էլ. հասցեն՝ azaqaryan2011@mail.ru
ՀՎՀՀ՝ 01231628

ՀՀ պաշտպանության նախարարության և «Դարշին» ՍՊԸ-ի միջև 13.03.2017թ. կնքված ՓՇՀԱՊՁԲ-10/1-1 ծածկագրով գնման պայմանագրի(այսուհետ՝ նաև Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել 2,662 խոր.մ վառելափայտ՝ 43,390,600 (քառասուներեք միլիոն երեք հարյուր իննսուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գումարով, սակայն 15.11.2017թ. դրությամբ մատակարարվել է ընդամենը 940 խոր.մ վառելափայտ:

Հիմք ընդունելով վերը նշված պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 17.11.2017թ.-ին միակողմանի՝ չմատակարարված ապրանքի մասով լուծում է ՓՇՀԱՊՁԲ-10/1-1 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Դարշին» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին որպես Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժ փոխանցել 631,544 (վեց հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ՝ մատակարարման ժամկետների խախտման համար:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Դարշին» ՍՊԸ-ից կգանձվի նաև Պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 4,339,060 (չորս միլիոն երեք հարյուր երեսունինը հազար վաթսուն) ՀՀ դրամի չափով:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374 10) 29-44-01, Ֆաքս (+374 10) 29-43-12
г. Ереван, 0044, Багреванда 5, Тел.: (+374 10) 29-44-01, Факс: (+374 10) 29-43-12